

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Շահագրգիռ նախարարությունների առաջարկությունները՝ «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

NN	Առաջարկություն և դիտողություն	Նշումներ
1	2	3
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն		
1.	«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հոդված 1-ում նշված 17.2 կետի «կարողությունները» բառից հետո լրացնել «գբադմուներին դասակարգչի և մասնագիտությունների որակավորումների բնութագրերին համապատասխան» բառերը	Ընդունված է մասամբ, կետը խմբագրված է
2.	«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին » ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի «1-ին կետը» բառերը փոխարինել «2-րդ կետը» բառերով:	Ընդունված է
3.	«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի 1-ին հոդվածի «բնութագրերը» բառը փոխարինել «բնութագրերի» բառով:	Ընդունված է
ՀՀ առողջապահության նախարարություն		
1.	Ելնելով բժշկագիտության զարգացման արդյունքում ի հայտ եկող նոր մասնագիտական ուղղություններից, ախտորոշման և բուժման նոր եղանակներից՝ անհրաժեշտություն է առաջանում պարբերաբար, զուտ մասնագիտական տեսանկյունից ՝ ըստ կրթական աստիճանների, վերանայել մասնագիտությունների անվանացանկը և որակավորման բնութագրերը: Առաջարկվում է հաշվի առնել, որ այս գործառույթները գտնվում են ՀՀ առողջապահության նախարարության լիազորությունների շրջանակում:	Առանձին մասնագիտությունների որակավորումների բնութագրերը մշակվելու են՝ ՀՀ կառավարության կողմից ընհանրական բնութագրերի հաստատումից հետո: Համաձայն Բոլոնիայի գործընթացի սկզբունքների, այդ մշակումները պետք է իրականացվեն մասնակցային գործընթացով՝ ներգրավելով բոլոր շահագրգիռ կողմերը:

1	2	3
ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն		
1.	«Նախնական մասնագիտական արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի « Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետը» դարձնել «Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետը»:	Ընդունված է
ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն		
1.	«Նախնական մասնագիտական արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի հոդված 2-ում «1-ին» թիվը անհրաժեշտ է փոխարինել « 2-րդ» թվով:	Ընդունված է